Արձանագրություն N 2

ՀՀ Քննչական կոմիտեի կողմից տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՀՀ ՔԿ ԷԱՃԾՁԲ-ԾՍ-23/1** ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան,Մամիկոնյանց 46/5

23 նոյեմբերի 2022թ.
ժամը՝ 14:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Ազարյան
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Մկրտչյան, Մ. Անտոնյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Նազարյան

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գնի վերաբերյալ

Չափաբաժնի համարը	*Չափաբաժնի անվանումը*	*Ծառայության ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը (ՀՀ դրամ)*
1	տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրային ապահովման սպասարկում	***180 000***
2	տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրային ապահովման սպասարկում	***228 000***
3	տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրային ապահովման սպասարկում	***2 619 000***
4	տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրային ապահովման սպասարկում	***4 200 000***
5	տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրային ապահովման սպասարկում	***2 400 000***

2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 21.11.2022թ.-ին ժամը 14:00-ին:

Էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 22.11.2022 թ.-ին ժամը 14:00-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) ըստ չափաբաժինների և հասցեները.

Հ/հ	*Մասնակիցների անվանումները*	*Հասցեներ*
1	ԱՅԹԻ 365 ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 00192202 , ք. Երևան, Ահարոնյան 2, 5-րդ հարկ, հեռ. 012 51 00 02, gnumner@it365.am
2	Միկրորինգ ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 00824922, ՀՀ, ք. Երևան, Սայաթ-Նովայի պող. 33/63, 010 52 94 21, info@microring.am

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

ՀՀ ՔԿ ԷԱՃԾՁԲ-ԾՍ-23/1 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

eauction.armeps.am համակարգի միջոցով հրավերով նախատեսված հարցումներ չեն եղել:

6.Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ

Չ/հ	Ծառայության անվանումը	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգա վիճակ
				Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրային ապահովման սպասարկում	1.ԱՅԹԻ 365 ՍՊԸ	180 000	150000	20 %	180000	120350	20 %	**144 420**	
		2.Միկրորինգ ՍՊԸ		145000	20 %	174000	121800	20 %	146 160	
2	տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրային ապահովման սպասարկում	1.Միկրորինգ ՍՊԸ	228 000	165000	20 %	198000	135300	20 %	**162 360**	
		2.ԱՅԹԻ 365 ՍՊԸ		200000	20 %	240000	136950	20 %	164 340	
3	տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրային ապահովման սպասարկում	1.ԱՅԹԻ 365 ՍՊԸ	2 619 000	1700000	20 %	2040000	1179000	20 %	**1 414 800**	
		2.Միկրորինգ ՍՊԸ		1925000	20 %	2310000	1300000	20 %	1 560 000	
4	տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրային ապահովման սպասարկում	1.ԱՅԹԻ 365 ՍՊԸ	4 200 000	4200000	20 %	5040000	2900000	20 %	**3 480 000**	
		2.Միկրորինգ ՍՊԸ		3415000	20 %	4098000	2971000	20 %	3 565 200	
5	տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրային ապահովման սպասարկում	1.Միկրորինգ ՍՊԸ	2 400 000	1920000	20 %	2304000	1920000	20 %	**2 304 000**	
		2.ԱՅԹԻ 365 ՍՊԸ		3200000	20 %	3840000	3200000	20 %	3 840 000	Մերժված

Աճուրդն ամփոփվել է 22.11.2022թ-ին և Համակարգի կողմից

- 1-ին, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել **ԱՅԹԻ 365 ՍՊԸ-ն,**
- 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել **Միկրորինգ ՍՊԸ-ն:**

7. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և նիստը կասեցնելու մասին

Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակիցների ներկայացրած հայտերը, արձանագրեց, որ

1. Համակարգի կողմից **2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից Միկրորինգ ՍՊԸ-ի հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝**

- Ներկայացված Հավելված 1-ում (այսուհետ՝ Դիմում հայտարարություն) 3-րդ կետից հետո գրված նախադասությունը ավելորդ է, քանի որ գնման ընթացակարգով ձեռք են բերվում ծառայություններ:

- Ներկայացված Հավելված 1.2-ում (այսուհետ՝ Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր) 4.3.3 և 4.2.3 կետերը ենթակա են շտկման՝ վարչատարածքային միավորը պետք է նշվի ք. Երևան /բոլոր իրական շահառուների դեպքում/:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով, ինչպես նաև **ՀՀ ՔԿ ԷԱՃԾՁԲ-ԾՍ-23/1** ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.11 կետով՝ Հանձնաժողովը որոշեց՝ 23.11.2022թ.-ին նիստը կասեցնել՝ Համակարգի միջոցով ծանուցել **Միկրորինգ ՍՊԸ-ին**, մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

8.Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց նիստը շարունակել 25.11.2022թ. ժամը 10:00-ին, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

9. 25.11.2022թ. ժամը 10:00-ին նիստը վերսկսելու վերաբերյալ

Նիստը վերսկսվեց 25.11.2022թ. ժամը 10:00-ին: Հանձնաժողովն ուսումնասիրեց և արձանագրեց, որ **Միկրորինգ ՍՊԸ-ն** սահմանված ժամկետում ներկայացրել է շտկման ենթակա փաստաթղթերը:

Հանձնաժողովը որոշեց՝

1. **Միկրորինգ ՍՊԸ**-ի հայտը 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝0:

10. Տվյալներ՝ ընտրված մասնակցի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրի կնքման վերաբերյալ

25.11.2022թ.-ին գնահատող հանձնաժողովը որոշեց՝

10.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝

- 1-ին, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **«ԱՅԹԻ 365» ՍՊԸ**-ին հայտարարել որպես ընտրված մասնակից:
- 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **Միկրորինգ ՍՊԸ**-ին հայտարարել որպես ընտրված մասնակից

10.2 Հաստատել էլեկտրոնային աճուրդի միջոցով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

10.3 Անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

10.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արմեն Ազարյան

_____ Վահագն Մկրտչյան

_____ Մերի Անտոնյան

քարտուղար _____ Սիրուշ Նազարյան